ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԽԱՊԱ-ԳՀԾՁԲ-19/02-1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Վեդի «18» սեպտեմբերի 2019 թ.
Ժամը՝ 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Եղիազարյան
	Ա. Բաղդասարյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա.Վարդանյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի սեպտեմբերի 13-ին, կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հարցման մասին տեղեկատվությունը չի տրամադրվել :

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման կարգի 44 կետի սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

2. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ԽԱՊԱ-ԳՀԾՁԲ-19/02-1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՌԵՍՈ» ԱՓԲԸ–ին:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-կետի համաձայն անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում հինգ օրացուցային օր է:

2.3 Հանձնաժողովի քարտուղարին:

Անգործության ժամկետի լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի կնքման նպատակով «ԽԱՊԱ-ԳՀԾՁԲ-19/02-1» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Հանձնաժողովի նախագահ Վ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ Ռ. Եղիազարյան

Ա. Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար Ա.Վարդանյան